ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 6

Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների յուրահատուկ շուկայում մասնակցությունից առաջացող պարտավորություններ

Հղումներ

- *ՀՀՄՍ 8 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*
- *ՀՀՄՍ 37 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ*

Նախապատմություն

1 ՀՀՄՍ 37-ի 17-րդ պարագրաֆում նշվում է, որ պարտավորեցնող դեպքը այն անցյալ դեպքն է, որը հանգեցնում է ներկա պարտականության, որի մարումից (կատարումից) խուսափելու որևէ իրատեսական այլընտրանք կազմակերպությունը չունի:

2 ՀՀՄՍ 37-ի 19-րդ պարագրաֆում սահմանվում է, որ պահուստ են ճանաչվում միայն <<այն պարտականությունները, որոնք առաջանում են անցյալ դեպքերից և գոյություն ունեն՝ անկախ կազմակերպության ապագա գործողություններից>>:

3 Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների (ԷԷՍԹ) վերաբերյալ Եվրոպական Միության դիրեկտիվը, որը կարգավորում է սարքավորումների թափոնների հավաքումը, մշակումը, վերականգնումը և ոչնչացումը՝ առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու, առաջադրել է հարցեր այն մասին, թե որ պահին պետք է ճանաչվի ԷԷՍԹ հեռացման պարտավորությունը: Դիրեկտիվը տարանջատում է <<նոր>> և <<պատմական>>, ինչպես նաև տնային տնտեսություններից առաջացող և տնային տնտեսություններից բացի այլ աղբյուրներից առաջացող թափոնների տեսակներ: <<Նոր>> թափոնը վերաբերում է 2005 թվի օգոստոսի 13-ից հետո վաճառված ապրանքներին: Դիրեկտիվի իմաստով, նշված ամսաթվից առաջ վաճառված բոլոր կենցաղային սարքավորումների թափոնները համարվում են <<պատմական>>:

4 Դիրեկտիվը սահմանում է, որ կենցաղային սարքավորումների <<պատմական>> թափոնների կառավարման ծախսերը պետք է հոգան տվյալ տեսակի սարքավորումներ արտադրողները, որոնք ներկա են շուկայում այն ժամանակաշրջանում, որը որոշվում է յուրաքանչյուր Անդամ պետության կողմից կիրառելի օրենսդրությամբ (չափման ժամանակահատված): Դիրեկտիվը նշում է, որ յուրաքանչյուր Անդամ պետություն պետք է սահմանի մեխանիզմ, ըստ որի՝ արտադրողները պետք է համամասնորեն մասնակցեն ծախսերի հատուցմանը, <<օրինակ՝ ընկերության՝ տվյալ շուկայի համապատասխան բաժնում մասնակցության համամասնությամբ ըստ սարքավորման տեսակի>>:

5 Սույն մեկնաբանության մեջ օգտագործվող մի շարք տերմիններ, ինչպիսիք են <<շուկայի բաժին>> և <<չափման ժամանակահատված>>, կարող են տարբեր կերպով սահմանվել առանձին Անդամ պետություններում կիրառելի օրենսդրություններում: Օրինակ՝ չափման ժամանակահատվածի տևողությունը կարող է լինել մեկ տարի կամ ընդամենը մեկ ամիս: Նմանապես, շուկայի բաժնի չափումը և պարտականության հաշվարկման բանաձևերը կարող են տարբերվել տարբեր երկրների օրենսդրություններում: Սակայն բոլոր թվարկված օրինակները ազդեցություն ունեն միայն պարտավորության չափման վրա, ինչը սույն մեկնաբանության գործողության ոլորտից դուրս է:

Գործողության ոլորտ

© IFRS Foundation

6 Սույն մեկնաբանությունը տրամադրում է ուղեցույց <<պատմական>> կենցաղային սարքավորումների վաճառքից առաջացած թափոնների կառավարման պարտավորությունները (ըստ ԵՄ ԷԷՍԹ դիրեկտիվի) արտադրողների ֆինանսական հաշվետվություններում ճանաչելու վերաբերյալ:

7 Սույն մեկնաբանությունը չի վերաբերում ո՛չ <<նոր>> թափոններին, ո՛չ էլ տնային տնտեսություններից բացի այլ աղբյուրներից առաջացած <<պատմական>> թափոններին: Այսպիսի թափոնների կառավարման պարտավորության հաշվառումը կարգավորվում է ՀՀՄՍ 37-ում: Սակայն, եթե երկրի օրենսդրությունում տնային տնտեսություններից առաջացած <<նոր>> թափոնը դիտարկվում է այնպես, ինչպես տնային տնտեսություններից առաջացած <<պատմական>> թափոնը, ապա կիրառվում են սույն մեկնաբանության սկզբունքները՝ հղում կատարելով ՀՀՄՍ 8-ի 10-12-րդ պարագրաֆների ստորակարգությանը: ՀՀՄՍ 8-ի այդ ստորակարգության սկզբունքը տեղին է կիրառել նաև այն կանոնակարգերի նկատմամբ, որոնք սահմանում են պարտականություններ ԵՄ դիրեկտիվում ներկայացված ծախսերի բաշխման մոդելին նման եղանակով:

Հարցադրում

8 ՖՀՄՄԿ-ին ներկայացվել էր հարցադրում՝ սահմանել, թե ԷԷՍԹ-ի հեռացման գործընթացում ստորև նշվածներից որն է համարվում պարտավորեցնող դեպք թափոնների կառավարման ծախսումների պահուստի ճանաչման նպատակով ՀՀՄՍ 37-ի 14ա պարագրաֆի համաձայն՝

- <<պատմական>> կենցաղային սարքավորումների վաճառքը կամ արտադրությունը.
- շուկայում մասնակցությունը չափման ժամանակահատվածում.
- ծախսումների կատարումը թափոնների կառավարման հետ կապված միջոցառումների իրականացման շրջանակներում:

Փոխհամաձայնություն

9 Համաձայն ՀՀՄՍ 37-ի 14ա պարագրաֆի՝ չափման ժամանակահատվածում շուկայում մասնակցությունը համարվում է պարտավորեցնող դեպք: Հետևաբար, <<պատմական>> կենցաղային սարքավորումների թափոնների կառավարման ծախսումների պարտավորությունը չի առաջանում ըստ ապրանքների արտադրության կամ վաճառքի: Քանի որ <<պատմական>> կենցաղային սարքավորումների վերաբերյալ պարտավորությունը կապված է չափման ժամանակահատվածում շուկայում մասնակցության, այլ ոչ թե հետագա թափոնացման ենթակա գույքի արտադրության կամ վաճառքի հետ, պարտավորություն չի առաջանում, բացառությամբ այն դեպքի, կամ միայն այն պահից ի վեր, երբ չափման ժամանակաշրջանում առկա է շուկայի բաժին: Պարտավորեցնող դեպքի ժամկետը կարող է կախված չլինել այն ժամանակահատվածից, որի ընթացքում իրականացվում են թափոնի կառավարման միջոցառումները և կատարվում դրա հետ կապված ծախսումները:

Ուժի մեջ մտնելը

10 Սույն մեկնաբանությունը կազմակերպությունը պետք է կիրառի 2005 թվականի դեկտեմբերի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Եթե կազմակերպությունը սույն մեկնաբանությունը կիրառման մեջ է դնում 2005 թվի դեկտեմբերի 1-ից առաջ, ապա նա պետք է բացահայտի այդ փաստը:

Անցում

11 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ի համաձայն:

© IFRS Foundation